և զմի բևեռն Քրիստոսի, զոր թագաւորն եդ 'ի ծայր սանձին, որ միշտ 'ի ձեռին իւրում կայր: Սմա երեք որդիք եղեն, Կոստանդին՝ Կոստաս և Կոստանդիանոս: Յաւուրս սորին եղև ժողովն Նիկիոյ ՅԺԸ. Հայրապետաց վասն Արիոսի: Սա մեռաւ յՆիկոմիդիա, և բերեալ թաղեցաւ 'ի Կոստանդնուպօլիս:

Կոստանդին երկրորդն՝ ընդ Կոստայ և Կոստանդիանոսի. սոքա երեք եղբարք՝ որդիք էին մեծին Կոստանդիանոսի. սկսան յամի Տեառն ՅԼԳ. ինքնակալեալք զամիս ԽԳ: Սոքա ոչ կալան զիմաստութիւն և ոչ առողջ խորհուրդս, վասն այն բաժանեցան 'ի Հռոմայեցւոց և յարեան 'ի վերայ միմեանց. և 'ի պատերազմին մեռաւ միջակ եղբայրն, որ ուղղափառ էր, և բազում զօրք սատակեցան, և երկոքեան հաշտեցան: Իսկ կրտսեր եղբայրն, քանզի արիոսական էր, պատրեաց զմեծ եղբայրն զուղղափառն Կոստանդիանոս, արար զնա

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան